ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆ

## ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Օրենքով սահմանված կարգով հրավիրված ավագանու նիստին ներկա էին ավագանու բոլոր անդամներ:

Նիստը վարում էր նորընտիր ավագանու տարիքով ավագ անդամ Ալբերտ Այվազյանը: Նիստը արձանագրում էր ՝ Լուսինե Մաթևոսյանը:

Մինչև նիստի օրակարգին անցնելը Ալբերտ Այվազյանը ներկաներին ներկայացրեց թիվ 32 տարածքային ընտրական հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 30 արձանագրությունը, համաձայն որի ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու մանդատները բաշխվել են հետևյալ կերպ՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն՝ 13 մանդատ
«Ախուրյան» կուսակցությունների դաշինք՝ 8 մանդատ
«Հաղթանակ» կուսակցությունների դաշինք՝ 6 մանդատ

Ավագանու անդամներ են ընտրվել՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն՝

1. Ալբերտ Վարդգեսի Այվազյանը
2. Զավեն Աշոտի Մանուկյանը
3. Հասմիկ Արտաշեսի Նավոյանը
4. Կարեն Հրանտի Ներսիսյանը
5. Մարտիկ Հովհաննեսի Մաթոսյանը
6. Շամիրամ Նիկոլի Եղիազարյանը
7. Վասյա Ասպուրակի Արշակյանը
8. Ֆրունզե Միքայելի Անտոնյանը
9. Նարինե Կառլենի Մուշեղյանը
10. Հակոբ Ահարոնի Ոսկանյանը
11. Վաչագան Վոլոդիայի Հովհաննիսյանը
12. Թամարա Արմենակի Սուվարյանը
13. Միեր Միսակի Մնացյանը

«Ախուրյան» կուսակցությունների դաշինք՝

1.Արծրունի Ներսեսի Իգիթյանը
2.Կարեն Սերգոյի Սերգոյանը
3.Անի Գնելի Մկրտչյանը
4.Լադիկ Սերժիկի Ղազարյանը
5.Գարեգին Լեռնիկի Մկրտչյանը
6.Ազնիվ Ավետիքի Մանուկյանը
7.Սամսոն Գագիկի Հովհաննիսյանը
8. Էլենա Արմենի Սերոբյանը

«Հաղթանակ» կուսակցությունների դաշինք՝

1.Կարեն Արշակի Արշակյանը
2.Վարսիկ Ռազմիկի Վարդանյանը
3.Աղվան Զարզանդի Մարտիրոսյանը
4.Արտաշես Սամվելի Դրմեյանը
5.Կատյա Պետրոսի Էլբակյանը
6.Մանուկ Գուրգենի Առաքելյանը

Մինչ օրակարգային հարցերին անցնելը Ալբերտ Այվազյանը ներկայացրեց նաև ավագանու խմբակցությունների ստեղծման կարգը: Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 1-ին մասի՝

Ավագանու խմբակցությունները ստեղծվում են նորընտիր ավագանու առաջին նստաշրջանի բացման օրը՝ հետևյալ սկզբունքին համապատասխան՝

ավագանու անդամների մանդատների բաշխմանը մասնակցած կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի առաջադրմամբ ընտրված ավագանու անդամներն ընդգրկվում են նույնանուն խմբակցություններում: Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի՝ խմբակցությունը գրավոր ներկայացնում է իր կանոնադրությունը, անվանումը, կազմը, ղեկավարի և քարտուղարի անունները, ազգանունները:

ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու կազմում գործելու են թվով 3 խմբակցություններ, դրանք են՝

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն
«Ախուրյան» խմբակցություն
«Հաղթանակ» խմբակցություն

Թվով 3 խմբակցությունները նիստը վարողին ներկայացրերին խմբակցությունների ստեղծման վերաբերյալ բոլոր փաստաթղթերը:
Ապա Ալբերտ Այվազյանի առաջարկությամբ անցում կատարվեց օրակարգի հարցերին:

Լսեցին
*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 12 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 12 նիստի հետևյալ օրակարգը՝
1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի նորընտիր ավագանու առաջին նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողով ստեղծելու և անհատական կազմը հաստատելու մասին
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավար ընտրելու մասին
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի երդման արարողության հետ կապված կազմակերպչական հարցերի մասին
4.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրվա սահմանում

Կողմ-27 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 91/

Լսեցին
*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՎԱԳԱՆՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթով, հիմք ընդունելով Ախուրյան համայնքի ավագանու խմբակցությունների առաջարկությունները՝ ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմում թեկնածուներ առաջադրելու վերաբերյալ, համայնքի ղեկավարի ընտրությունը կազմակերպելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

1.Ստեղծել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի նորընտիր ավագանու՝ երեք անդամից բաղկացած ժամանակավոր հանձնաժողով /այսուհետ՝ հանձնաժողով/:

2.Հաստատել հանձնաժողովի անհատական կազմը՝

1) Արտաշես Դրմեյան -«Հաղթանակ» խմբակցություն

2) Սամսոն Հովհաննիսյան - «Ախուրյան» խմբակցություն

3) Մարտիկ Մաթոսյան -«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն

Կողմ-27 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 92/

Լսեցին
*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ/*

Մինչև համայնքի ղեկավարի ընտրությունը Ալբերտ Այվազյանը ներկաներին մանրամասն ներկայացրեց համայնքի ղեկավարի ընտրության կարգը:
Խմբակցությունները ներկայացրեցին համայնքի ղեկավարի իրենց թեկնածուներին՝ «Քաղաքացիական պայամանագիր» խմբակցությունը ներկայացրեց Ալբերտ Այվազյանի թեկնածությունը, «Հաղթանակ » խմբակցությունը հայտարարեց, որ համայնքի ղեկավարի թեկնածու չի առաջադրելու, իսկ «Ախուրյան» խմբակցությունը առաջադրեց Արծրունի Իգիթյանի թեկնածությունը:
Որոշված կարգի համաձայն թեկնածուները սկսեցին իրենց ելույթները:
Առաջինը ելույթ ունեցավ Արծրունի Իգիթյանը, ու հարցեր ուղղեց ավագանու անդամ Մարտիկ Մաթոսյանը:
Ապա ելույթ ունեցավ Ալբերտ Այվազյանը:
Թեկնածուների ելույթներից հետո տեղի ունեցավ բաց քվեարկություն:
Հաշվիչ հանձնաժողովը ամփոփեց քվերակության արդյունքները, որի համայձայն «Ախուրյան» խմբակցության առաջադրած թեկնածու Արծրունի Իգիթյանը ստացել էր 14 կողմ ձայն, իսկ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության թեկնածու Ալբերտ Այվազյանը՝ 13 կողմ ձայն:
Այսպիսով Ախուրյան համայնքի ղեկավար ընտրվեց Արծրունի Ներսեսի Իգիթյանը:
Նիստը շարունակեց վարել Արծրունի Իգիթյանը:

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142.2 հոդվածի 1-ին, 3-րդ և 8-րդ մասերի դրույթներով, հիմք ընդունելով Ախուրյան համայնքի նորընտիր ավագանու ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի՝ 2021 թվականի դեկտեմբերի 20-ի ԺՀՀ/1 արձանագրությունը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավար ընտրել Արծրունի Ներսեսի Իգիթյանին:

Կողմ-14 Դեմ-13 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 93/

Լսեցին
*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՁԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի երդման արարողությունը կազմակերպել 2021 թվականի դեկտեմբերի 23-ին՝ ժամը 11:00-ին:

Կողմ-27 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 94/

Լսեցին
*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐՎԱ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2022 թվականի հունվարի 10-ը՝ ժամը $14^{00}$:

Կողմ-26 Դեմ-1 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 95/

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝**

Կողմ -27 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՅՎԱԶՅԱՆ

Ֆ. ԱՆՏՈՆՅԱՆ

Մ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Կ. ԱՐՇԱԿՅԱՆ

Վ. ԱՐՇԱԿՅԱՆ

Ա. ԴՐՄԵՅԱՆ

Շ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Կ. ԷԼԲԱԿՅԱՆ

Ա. ԻԳԻԹՅԱՆ

Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Լ. ՂԱԶԱՐՅԱՆ

Մ. ՄԱԹՈՍՅԱՆ

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

Գ. ՄԿՐՏՉՅԱՆ

Մ. ՄՆԱՑՅԱՆ

Ն. ՄՈՒՇԵՂՅԱՆ

Հ. ՆԱՎՈՅԱՆ

Կ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Հ. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. ՍԵՐԳՈՅԱՆ

Է. ՍԵՐՈԲՅԱՆ

Թ. ՍՈՒՎԱՐՅԱՆ

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԸ ՎԱՐՈՂ՝ Ա. ԱՅՎԱԶՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ _____ Լ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

20 դեկտեմբերի 2021 թվական
գյուղ Ախուրյան